ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱՎԵՐՅԱԼ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ. «11) Խթանել բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը ~~կրթական գործընթացում~~ ուսումնադաստիարակչական գործընթացներում, այդ թվում՝ արտադասարանական եւ արտադպրոցական միջոցառումներում՝ դասարանում ապահովելով խտրականությունից զերծ միջավայր ~~դասարանում~~ եւ կանխարգելելով աշակերտների մեկուսացումը:»:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1. ~~1-ին մասին 2.1 կետն ուժը կորցրած ճանաչել:~~ 1-ին մասի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.1 մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանը.»:

2. 1-ին մասը լրացնել նոր՝ 8-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ. ~~«8) դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ՝ երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների եւ ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաեւ այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար:»~~ «8) երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների և ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաև այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ կամ միանալու արդեն ստեղծված փոխօգնության խմբերին,»:

3. 2-րդ մասի 1-ին կետում «կրթություն ստանալու համար» բառերից հետո լրացնել «եւ աջակցել դասապատրաստմանը» բառերը:

4. 2-րդ մասի 3-րդ կետում «հարգալից վերաբերմունք» բառերից հետո լրացնել «մարդու, պետության» բառերը, «,իսկ ընտանիքի, մեծահասակների, պետական եւ մայրենի լեզվի,» բառերից հետո՝ հանել «պետության,» բառը:

~~5. 2-րդ մասի 4-րդ կետը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ. «4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների եւ հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության, շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնության եւ կենդանիների նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ.»:~~

~~6.~~ 5. 2-րդ մասը լրացնել նոր՝ 9-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ. «9. մասնակցել երեխայի անհատական ուսուցման պլանի ~~մշակմանն ու~~ իրականացմանը:»:

~~*Հոդված 3.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

~~1.~~ Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:~~